№ 80 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31 (ՆՈՅԵՄԲԵՐԻ 12) 1877 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31 (ՆՈՅԵՄԲԵՐԻ 12) № 80

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 7 ռուբլ. կէս տարվանը 4 ռուբլ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Ծատուրեանի և Արասխանեանի խանութում

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 (Բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

„ՄՇԱԿ" լրագրի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ խնդրում է այն բաժանորդներին, որոնք այս ամբողջ տարվայ կամ կէս տարվայ բաժանորդական գինը լիովին չեն տուել խմբագրութեանը, շտապեն լրացնել իրանց բաժանորդագինը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչի վաղ չենք մտածել.—Ներքին տեսութիւն. Պատերազմական բեմից. Նամակ Հին-Նախիջևանից. Նամակ Խմբագրին. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—Արտաքին տեսութիւն. Պատերազմը առաջ և այժմ. Թիւրքիա. Ֆրանսիա. Արտաքին լուրեր. — Խառն լուրեր. — Յայտարարութիւններ. — Տեղեկացոյց.

ԻՆՉԻ ՎԱՂ ՉԵՆՔ ՄՏԱԾԵԼ.

Մեր լրագրի անցեալ տարիների համարներում մենք շատ անգամ խօսեցինք արդիւնաբերութեան գիւղական ընկերութիւնների վրա: Գիւղացիները ենթարկված լինելով միշտ զանազան չարչիների և աֆերիստների հարստահարութեանը, կարող էին իրանց բոլոր գիւղական արդիւնքները անմիջապէս իրանք բերել քաղաքը և ծախել քաղաքի մէջ: Իհարկէ դորա համար հարկաւոր կը լիներ կազմել քաղաքում մի կենտրոնական ընկերութիւն, որ ունենար սկզբնական հիմնական մի դրամագլուխ և ունենար նոյնպէս մի պահեստ, որտեղ գիւղացիները իրանց արդիւնքները բերելով կարող էին պահել:

Այդ տեսակ ընկերութեան ամբողջ կազմակերպութիւնը շատ անգամ մեր ընթերցողներին բացատրած լինելով, մենք այն միտք յայտնեցինք որ այդ գիւղական արդիւնաբերութեան ընկերութեան հիմնական գումարն էլ պատրաստ է՝ դա Թիֆլիսի Քաղաքային Վարչութեան ձեռքում եղած համքարների փողերն են, որոնց գումարը հասնում էր մինչև 5 թէ 6 հազար ռուբլ, իսկ առաջ աւելի էլ նշանաւոր գումար էր կազմում:

Այդ տեսակ ընկերութիւն կազմվելով միջոց կը տար Թիֆլիս շրջապատող գիւղերի շինականներին անմիջապէս բերել քաղաքը իրանց ամեն տեսակ արդիւնքներ՝ ալիւր, իւղ, խոտ, գարի, մինչև անգամ փայտ, և ծախել քաղաքային ազգաբնակութեան աշխատող դասի վրա մատչելի գներով:

Այդ տեսակ ընկերութիւն կազմելու և պահեստ հիմնելու վրա պէտք է վաղ մտածէինք....

Եթէ քանի մի տարի առաջ իրագործած լինէինք այդ տեսակ ընկերութիւն, այժմեան պատերազմական դժուար հանգամանքների պատճառով մեր քաղաքային ազգաբնակութեան աշխատող դասը այն նեղութիւնները չէր կրի, ինչ որ կրում է այժմ և միջոց կունենար թէ հացը և թէ ուրիշ առաջին հարկաւորութեան մթերքները մատչելի գներով ձեռք բերելու:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲԵՄԻՑ

Պաշտօնապէս հեռագրում են Կիւրիւկ-Դարայից հոկտեմբերի 25-ից որ հոկտեմբերի 23-ին Գեյման և Տէր-Ղուկասով գեներալների միացած զօրքերը տաս ժամվայ ճակատամարտից յետոյ, Ջարդեցին Մուխթար և Իզմայիլ փաշաների զօրքերը Դէվէ-Բօյնի ամրացած դիրքի վրա: Թիւրքերը փախան կատարեալ անկարգութեան մէջ, դցելով բանակը, թնդանօթները և պաշարեղէնները: Կորուստները դեռ յայտնի չեն:—Հոկտեմբերի 24-ին երբ գեներալ Լազարեվի զօրքը վեր առաւ ամրացած դիրքերը Ղարսի ամրացած դիրքերի հարաւարևելեան կողմի առջև, նոր բատարէաները կանգնեցնելու համար, թիւրքերը պաշտպանված լինելով թնդանօթների զօրեղ կրակով փորձեցին յարձակվել մեր դիրքերի վրա: Բայց կատարեալ անաջողութիւն ունելով, յետ քաշվեցան անկարգութեան մէջ և հալածվեցան մեր զօրքերից մինչև իսկ Խաֆիս-փաշա—Թափիա դիրքը: Ցափշտակվելով աջողութեամբ մեր զօրքերի երկու բատալիօնները գնդապետ Ֆադէեվի առաջնորդութեամբ, չը նայելով սաստիկ հրաձգութեանը, մտան Խաֆիս-Թափիա ամրացած դիրքը և սուիններով ոչնչացրին գարնիզօնի մեծ մասը, փչացրին թնդանօթները, գերի վեր առան թիւրքաց 10 օֆիցէրներին և 40 սօլդատներին և վերադարձան կրելով համեմատաբար աննշան կորուստներ:—Բալկանեան թերակղզու վրա, ինչպէս հաղորդում է «Միջազգային հեռագրական ընկերութիւնը» ռուսաց զօրքերը ունեցան մի քանի փոքրիկ կռիւներ թիւրքերի հետ: Այդ բոլոր կռիւներում ռուսները յաղթող մնացին:

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

7-ին հոկտեմբերի

Առատ էր այս տարի Նախիջևանի գետակի ջուրը, և այդ իսկ պատճառով բաւականին առատ եղաւ և այս տարվայ բերքը (ցորենի և բամբակի). Իսկ խաղողը ՝ընավում է հետզհետէ՝ այն տարածած ախտաւորութենից՝ որի դէմ դեռ ես մի արդիւնաւոր հնար չէ գտնված. Աւելի այս աչունը այգետէրեր անբաւական են, և մանաւանդ որ պատերազմի պատճառով խմիչքի գինը և պահանջը սովորականից աւելի է. Հացի գինը հետևելով Երևանի օրինակին 40—50 կոպէկով բարձրացաւ (պուդի վրա), չը նայեցեալ՝ որ այստեղից ոչ Երևան են տանում և ոչ էլ գաղթականներ են եկած. Ինչ որ լինի մեզանում՝ անհաչիւ և անտեղի պիտի լինի. ոչ պահանջի և և ոչ հաչի վրա հիմնած՝ այլ սովորութեան և լուրերի.

Եւ որովհետև ոչ երկաթուղի կայ, և ոչ այլ յարմար միջոց որ և իցէ արմատիք հեշտութեամբ փոխադրելու այլ տեղ և օգուտ քաղելու, թէ թանդ և թէ էժան՝ մեր եղած և չեղածը մեր մէջ կը մնայ ըստ մեծի մասին և մեզ վրա կը սպառվի, ուրեմն և մի նշանաւոր եկամուտ չէ ստանում դրսից Նախիջևանը.

Վաճառականութիւնը՝ կամ լաւ ևս ասել չարչութիւնը էլ այնքան գոհ չէ. պատերազմը իր առատ ձեռքը չէ հասուցանում մինչև այստեղ. իսկ տեղական մարդիկ այդ իսկ պատերազմի պատճառով այլ ծախսեր ունենալով և հացի թանգութեան համար՝ չեն կարողանում գնել այնքան որքան և առաջ.

Գլխաւոր առնելու և ծախելու առարկան տաւարեղէնն է՝ որի հետ տարաբաղդաբար անխնայ կերպով է վարվում թէ ինքը երկրագործը՝ թէ առնող (չօդարը) և թէ քնութիւնը՝ որ չուտ չուտ ցաւեր է ուղարկում ամենապիտանի արածների վրա. հաղիւ կարելի է այժմ պատահել այս կողմերում լաւ լաւ եղների և ընտիր ու խոշոր կովերի. գոմէշն է մնում ըստ մեծի մասին այստեղի երկրագործութեան գործողը՝ և որը բարձր և սարի գիւղերում չէ կարող կենալ, այլ դաշտային գիւղերում. սակայն և այս դանդաղ և ուժեղ կենդանուն նոյնպէս չեն խնայում թէ ոգէտ գիւղացու անպատշաճ լուծը, թէ Նախիջևանցի մսագործի դանակը՝ և թէ հիւանդութիւնը որոնք աւելի և աւելի փռում են այս թանգագին կենդանու կաշին Նախիջևանի բազարումը անց ու դարձ անողի ոտի տակը.

Ձին այստեղ լուծ չունէ, այլ ասիական սովորութեամբ հեծնելու և բեռան է ընթարկվում. իսկ այս վերջին գործողութիւնից միշտ վիրաւոր և վատ դրաստների խումբ կարելի է տեսնել ահագին փալանների տակ իր վիճակակից իշուկի նախրի հետ: Հեծնելու ձիանքը բաւականին թանգացել են, նոյնպէս և գրաստը, ի գործ դրվելով պատերազմի և պատերազմողների հարկաւորութեանց մէջ.

Աւելի բարձր ասպարէզը մնացել է այժմս ուղտին, որը մի կամ երկու հարիւրաւոր կարելի է ճարել Նախիջևանի գաւառում. աւելի շատեր և լաւ տեսակը այս կենդանու անց ու դարձ են անում Նախիջևանի միջով դէպի Պարսկաստանը տրանզիտ ծանրութեան փոխադրող կարաւանների ձեռքով. Ոչխարը թէև առատ չէ միւս տարիներում եղածից, բայց համեմատաբար էժան է ծախվում, և որի միսը ամենասիրելի կերակուրն է թէ հայի և թէ թուրքի համար. Փունտը 4—5 կոպէկ ածէ երեք ամսի միջոցում մինչ հոկտեմբերի վերջը: Բանջարեղէն ուտելիք բաւական առատ և էժան են՝ բրինձը 1—40-ից 1—60 արժէ պուդը. փայտի սաժէնը մինչև 25 ռուբլի է.

Եկան և գալիս են կանոնաւոր անձրևներ, որոնք բարի աչուն և ապագայ են խոստանում մեզ. Հիւանդութիւն և աչքացաւ համեմատաբար այս տարի չատ քիչ էր և է, որը կարելի է վերաբերել լաւ և անձրևային եղանակին և բոստանների բերքի և խաղողի քչութեանը. Մէկ խօսքով վատ չէ կարելի ասել մեր ներկայ նիւթական դրութեանը.

Բարոյական կողմնէրս.... այս մի անչարժ վեմ է, չը գիտեմ ում ձեռքով այսքան ամուր հաստատված, որ հնար չէ լինում խախտելու: Երբ ասում ենք հնար չը կայ այդ իսկապէս նշանակում է, որ ոյժ և գործող չը կայ, և այնքան քիչ՝ որ մի ձեռքի մատների վրա կարելի է համարել: Շատ ժամանակ չէ որ Նախիջևանը կորցրեց մի հասկացող և արժանաւոր անձն (Շաֆի բէկ Թուրք) և այն էլ յանկարծակի հիւանդութեամբ.

Շատ պէտք էր որոնել՝ բայց և հազիւ երբէք գտնել մի հանրագաղափար և աղատ դատող ոք, քան երբեմն Կայսրին թիկնապահ եղող Շաֆին: Առանց սարսափի չը կարողացայ լսել՝ քանի մի օր առաջ մի բարեկամիս այս խօսքերը «Ես հաչումս սխալ եմ եղել՝ երբ առաջ ասում էի թէ Նախիջևանին չատ տարիներ պէտք են շարժվելու և յառաջադիմութեան համար, իսկ այժմ նկատում եմ, որ քանի դարեր պէտք են.»

Պէտք է ասել ինչ է արել այդ պարոնը՝ որ այդպէս վհատվել է,—ուղիղն ասել՝ քիչ բան, բայց և այդպէս նա լաւ ծանօթ է իր տեղականներին և սառն հաչի ու դատողութեան տէր:

Նա՝ այս խօսքերը կրկնեց ինձ՝ երբ խօսք էր լինում Ջրի տնտեսութեան և բաշխման հոգսերի համար արած փորձի անյաջողութեան մասին:

Եւ փորձը այս էր: Փոխանակ՝ ըստ հին սովորութեան, մեր գետակի ջուրը (բոլոր Նախիջևանի դաշտը այս գետակով պէտք է ջրվի) միայն մի անձի կամայականութեան և իշխանութեանը յանձնելու, լաւ ևս էր ընտրել հերթով տարուց տարի երեք պատշաճաւոր անձինք և նոցա տեսչութեանը յանձնել ջրի մատակարարութիւնը: Ջրպետը կը լինէր սոցա գործակալը որը կունենար ժողովրդից կարգած ջրբաշխ ծառաներ. չորս ամիս միայն է պահանջվում այս գործողութեանը, իսկ չորս ամսվայ համար այժմ ջրպետը ստանում է 800 մանէթ իսկ ջրբաշխներ գիւղերից 2—3 խալվար ցորեն ամեն մէկը և բացի այդ որքան կարելի էր չահվել. այս բոլորը հեշտ կարելի էր գումարել 1000 մանէթի վրա, և տալ վարձ թէ ջրպետ գործակալին և թէ ծառաներին: Կանոններ գրվեցան, մի երկու խորհուրդներ եղան, որ գրվածը առաջարկվէր տեղական իշխանութեանը հաստատելու և ըստ այնմ վարվէին:

Բայց մնաց.... ինչու.... որովհետև ամբողջ ժամերով պատի տակ անցկացնող Նախիջևանցի պարոնը ժամանակ չունեցաւ ստորագրելու, որովհետև մէկը կամ միւսը առանձին չահեր ունեն անկանոնութենից, որովհետև բոլոր գիւղացիք, որոնք ջրի վրա գլուխ են կոտրում, գլխները չատ են քաշ գցում երբ մօտենում են այդ բարձր պատերին, կամ խելօք ջրպետը գիտէ թէ ում բերանը ինչով պէտք է բռնել. և չատ «որովհետևներ».

Եւ այսպէս ջուրը, այդ ամենաթանգագին տարրը և Նախիջևանի առաջին կենսական պէտքի հիմքը, այս ձև կառավարութեան և հոգսի մէջ է. «Ուրեմն այլ ևս ինչ անել և ինչի սպասել» չեշտեց իր խօսքը պ. բարեկամս:—Սակայն պէտք է գործել և չը վհատվել. վհատութիւնը մահ է մահ... չեշտեցի և ես:

Այժմ հաղիւ Նախիջևանը մի առաջնորդ վարդապետ է ստացել, որի պահանջն է միշտ բարեկարգ եկեղեցիք և բարի տէրեր, ու որքան հնարաւոր է դպրոցներ ունենալ ոգէտ *) Նախիջևանցու համար:

Էջմիածինը լսեց հոգաբարձութեան բողոքին և ուղարկեց մեր ասած անձը, այժմ այդ անձը պահանջում է նոյն հոգաբարձուներից գործակցել իրան և անել ինչ պէտք է: «Շատ լաւ» ասում է հոգաբարձութիւնը և գնում է. «բարի էք հրամայում» կրկնում է աղայութիւնը ու հեռանում է. «ինչ է ուզում էս վարդապետը» չչնջում է ժողովուրդը ու զարմանում է: Քահանայ չունենք իսկապէս, իսկ տէրտէրներ չատ ունենք:

Զը պէտք է զարմանալ, եթէ մի քանի անտեղի և տղայական հակառակութիւններ ևս եղան, և մինչև իսկ բողոքներ այսպիսի յաջող-

*) Մեր ձեռին կայ Նախիջևանի մի քանի գիւղերի ժողովրդագրութիւն, որի մէջ նշանակած են գրագէտներ և անգրագէտք: Այդ իսկ թուանշանները պիտի ներկայացնենք չուտով որպէս զի մեր «ոգէտ» բառը բամբասանք և չարամտութիւն չը համարվի.

դից (պէտք է ներել Նախիջևանցուն այսպիսի բաներ), այլ լսել ուրախութեամբ որ վերջապէս, հա՛ վերջապէս, գործը ոտների վրա կանգնեցաւ և այժմ ուզում է գնալ։

Ցրուած մանուկներ և աղջիկները ժողովվում են. կանչված են ուսուցիչ և վարժուհի, տուն և տեղ հոգացված է, փողեր ժողովվում են և հոգաբարձութիւնը հոգս է կամենում տանել։

Ուրեմն յոյս ունենանք որ այս տարի (գուցէ և միւս տարի ևս) ուսումնարան, երկու սեռի դպրոց պիտի ունենանք։

Ուրեմն և իզուր չէր՝ որ մենք լաւ առաջնորդ էինք պահանջում և պահանջել մինչև այժմս Նախիջևանի պէս քաղաքի և գաւառի համար։

Գաղթական հայերի համար մասնաւոր տարրագրութիւն այստեղ էլ եղել է և շարունակվում է։ Այս մասին յետոյ։

Մեսրովպ Խուդավերդեանց։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Շուշի հոկտեմբ. 15-ին

Գուցէ ձեզ ևս յայտի լինի այն անմխիթար դրութիւնը, որի մէջ գտնվում են այսօր Շուշու հասարակական գործերը։ Այս մասին արդէն պատրաստվում է մի բրօշիւրա «Մշակի» բաժանորդների համար։ Մեր ուսումնարանը, որ վերջին ժամանակներումս սկսել է փոքր ինչ շունչ ու հոգի ստանալ, սպասում է դարձեալ իր անկման.... Այստեղի առաջնորդի փոխանորդ հայր սուրբը, որին երկար ժամանակ է չէ թոյլատրվում դպրոցի ուսումնական մասի մէջ ներս մտնելու, հետևաբար եղածն էլ քանդելու համար, այլ և տեսնելով որ այժմեան ուսուցչական խումբը չէ ծառայում իր անձնական շահերին ու փառքին,—այդ վարդապետը ամեն միջոցներով աշխատում է վնասել մինչև անգամ դպրոցի գոյութեանը։ Նորա շնորհով քաղաքում տարածվում են անախորժ լուրեր, նա չփոթում է ուսուցչական ժողովը հոգաբարձական ժողովի հետ, նա կուլեցնում է մի ուսուցիչ միւսի հետ, նա յայտնապէս չէ ծառայում ուսումնարանի օգտին....

Մի կողմ դնելով այս բոլոր հնարները նա, ինչպէս տեղեկացանք, անցեալ օրերում հեռագիր է մատուցել Նորին Օծութեան, ամենայն հայոց Վ. Կաթողիկոսին, որպէս թէ այդ դպրոցը չէ ծառայում իր նպատակին, դասատուութիւնները լինում են օտար լեզուով, աշակերտներին տրվում է օտար կրթութիւն, հոգի, ուղղութիւն և այլն և այլն....

Ժուղովուրդը, որ վկայում է ուսումնարանի այս օրվայ բաղձալի դրութեան և նկատելի մեծ առաջադիմութեան համար, պատրաստվում է արդէն զինուորվելու այդ անճիշդ տեղեկութիւնը տուողի դէմ, որի հետևանքը մենք կարծում ենք չափազանց վատ պիտի լինի. ուստի թէ այդ բոլորին լաւ վախճան տալու, և թէ ծածկված գաղտնիքների պատճառը բանալու համար,—պարտք ենք համարում «Մշակի» միջոցով հրապարակապէս յայտնել՝—նախ վարդապետի մասին, որ քանի նա Շուշու մէջ է, ուսումնարանը երբէք ապահով ապագայ չի ունենայ, երկրորդ նորա յայտնած խօսքերը մեր ուսումնարանի մասին բոլորովին սուտ և ծայրայեղ զրպարտութիւն է և երկրորդ սորանով խնդրում ենք Նորին Օծութեան, ամենայն հայոց Վ. Կաթողիկոսից մի քննիչ նշանակել այս ամենի համար, որի միջնորդութեամբ նոյն իսկ մեր քաղաքացիների գաղտնի գործերից շատերը լոյս դուրս գային և ողորմելի ուսումնարանն էլ մտնէր ապահով դրութեան մէջ....

Տեղ խնդրելով պատւական «Մշակի» մէջ այս տողերի համար, մենք հաւատացած ենք, որ սորանք կարժանանան որպէս Վեհափառ հօր սիրալիր տնօրէնութեանը, նոյնպէս ձեր և հասարակութեան խորին ուշադրութեանը։

Ստորագրեցին՝ Գրիգոր Պապեան, Արսէն Թօխմախեանց, Ներսէս Շահլամեանց, Հայրապետ Ադամեանց, Յովհաննէս Իշխանեան, Զաւադ Իշխանեանց։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, հոկտեմբերի 27-ին

Ուրախութեամբ սրտի յայտնում եմ—որ ձեր պատւական «Մշակ» լրագրի 73 համարում Հաւլաբարի Ս. Մարիամեան օրիորդական ուսումնարանի նիւթական կողմանէ ունեցած անապահով դրութեան վերաբերութեամբ առաջարկած նամակս՝ գտաւ արժանաւոր համակրութիւն։ Հաւլաբարի խեղճ ու չքաւոր ընտանեաց աղջիկների դիմութեան կարօտ աղաղակները և օգնութիւն խնդրող ձայնը՝ լսելի լինելով ուսումնարանների օգտին մերձաւոր ոմանց հայասէրներին, հրաւիրեցին նրանց օգնութեան ձեռք մեկնել և միջոց տալ ուսումնարանի աննախանձելի նիւթական կողմից կրած ծանրութիւնները թեթևացնել։

Վասն որոյ, յարգոյ խմբագիր, խնդրում եմ ձեր պատւական լրագրի միջնորդութեամբ ի լուր ամեն ընթերցողների հրատարակել իմ հրապարակական շնորհակալութիւնը, որ վերաբերում է այն անձինքներին, որոնք թէ բարերարական շարունակ տուրքով հոկտեմբեր ամսոյս 12-ից ստորագրվել են «խնամակալ» յիշեալ դպրոցի և թէ միանուագ մասնաւոր տուրքով շնորհիւ Վերին-Ագուլեցի մեծապատիւ պ. Մարտիրոս Հախնազարեանցի՝ օգնել են դպրոցիս։

Ուսումնարանիս մշտակայ խնամակալներն են՝ մի հայասէր պարոն, որ տալիս է տարեկան 150 րուբլ. պ. պ. Մարտիրոս Հախնազարեանց, Վերին-Ագուլեցի Աղեքսանդր Տէր-Մկրտչեանց, Կէրճէցի Ղուկաս Սամուէլեանց և Թիֆլիսցի Սարգիս Ղազարեան Նազարեանց, որոնք տալիս են տարեկան 5 րուբլ։

Մասնաւոր միանուագ նուիրատուներն են՝ մեծապատիւ Եղիսաբէթ Տէր-Գաբրիէլեանց, որ տուել է 3 րուբլ, յոյն Գէորգ Մէրկուրով—3 ր., Երևանցի Գէորգ Նազանեանց 1 ր., Նախիջևանցի Մէլիք-Մուրադեանց Նիկողայոս 1 ր., Վերին-Ագուլեցի Սմբատ Դաւթեանց 1 ր., Շուշեցի Դանիէլ Ղազեանց 1 ր., Թիֆլիսցի Յարութիւն Ղեմնդեանց 1 ր., Բօղդան Զոհրաբեանց 1 ր., Շահրիար Մէլիք-Փարսադանեանց 1 ր., Վահան Ռօմինեանց 50 կոպէկ, Միքայէլ Քանանեանց 50 կոպ., Աղեքսանդր Աբուլեանց 50 կոպ., Սմբատ Տէր-Գրիգորեանց 50 կոպէկ և Անդրոնիկ Տէր-Ռաֆայէլեան Վրթանէսեանց 50 կոպէկ։

Ցոյս ունեմ, որ մեր հարուստ հայ օրիորդները, տիկինները և պարոնները հեռու չեն մնայ Հաւլաբարի Մարիամեան մի հատիկ օրիորդական դպրոցին օգնութիւն հասուցանելի գործից, որով յիշեալ նուիրատուների օրինակով իրանց անունը անբաժան կը պահեն ուսումնարանի գոյութենից։

Տեսուչ՝ Պօղոս Քաթանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Առաջին հարկաւորութեան մթերքները ԹԻՖԼԻՍՈՒՄ սաստիկ թանդանում են օրից օր։ Հացի թանդութիւնը զգալի է և հարկէ ամենից շատ ազդաբնակութեան աղքատ դասակարգին։ Հարկաւոր կը լինէր մեր քաղաքային վարչութեանը մտածել կազմել հացի մի պահեստ (ամբարանոց), որպէս զի հարկաւոր ժամանակ չքաւոր ժողովուրդը միջոց ունենար առնել հացը մատչելի գնով և հացի գնի անընդհատ բացձրանալը կախված չը լիներ չարչիների կամայականութենից, որոնք առել են հացը մեծ քանակութեամբ և յետոյ ծախում են թանդ գնով։ Հացի պահեստը կազմելու համար հարկաւոր է որ քաղաքային վարչութիւնը կամ ինքն առնէ հացը գիւղացիներից և յետոյ մատչելի գներով ծախէ, կամ թոյլ տայ գիւղացիներին իրանց սեփական պահեստներ ունենալ քաղաքում, բոլորովին անկախ չարչիների միջնորդութենից իրանց հացը քաղաքի մէջ ծախելու համար։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են՝ «Մեր Վեհափառ Կաթողիկոսի շրջաբերական հրամանի հիման վրա մեր 3000 գաղթական ընտանիքների օգնութեան մասին, տեղիս յաջորդը աւելի արդիւնաւոր կացուցանելու համար ժողովարարութիւնը, յանձնեց, բպցի կրծակատարից (որին չաջողվեցաւ ոչինչ ժողովել), դարձեալ երեք աշխարհականներին և երկու քահանաներին, այն է՝ Գրիգոր քահանայ Թումանեանցին, Սիմէօն քահանայ Խաչատուրեանցին (գործակատարը) և Մկրտիչ քահանայ Տէր-Յովսէփեանցին, իսկ աշխարհականներից՝ Աղա Աղայեանցին, Մարտիրոս Նաբաթեանցին և Աղեքսանդր Խաչակեանցին։ Չէ կարելի չը գովել երիտասարդների անձնանուիրութիւնը այս գործի մէջ՝ նոքա միանալով քահանաների հետ, ամեն գիշեր մինչև ժամը 11-ը գնում են տները ման դալիս և ողորմութիւն ժողովում թէ դրամական և թէ հագուստեղէն, չը նայելով որ այդ իսկ դիտաւորութեամբ պ. դէպուտատ Յովհաննէսեանց ժողովել էր աւելի քան 700 րուբլ։ Ինչպէս լսում ենք մեր երիտասարդների ժողովածը հասնում է մինչև 630 րուբլ և մօտ 1000 կտոր հագուստ։ Ասում են որ յաջորդը մտադիր է հագուստեղէնը անկրուստ հասցնելու համար, ուղարկել Նորին Վեհափառութեան մօտ Գրիգոր քահ. Թումանեանցի ձեռքով։ Մեր կարծիքով քահանայի գնալը աւելորդ է և ի զուր ծախս։»

—

Մեզ գրում են ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ՝ «Հոկտեմբերի 23-ին այստեղ հետևեալ դէպք պատահեց։ Միլիցիա կազմող չէրկէզների ու տեղիս հայ հասարակ ժողովրդի մէջ սաստիկ կռիւ պատահեց։ Չէրկէզներից մէկը մի ձի է ծախում տեղիս հայ ֆայտաօնատիրոջ վրա և փողը սբտանալով դիտմամբ համոզում է իր ընկերներին գնան իր ձին յետ պահանջեն հայից, իբր թէ հայը ոչ թէ առել է այլ գողացել է յիշեալ ձին։ Ուստի առաւօտեան ժամը 11-ին երեք ձիաւոր չէրկէզներ հրապարակի վրա մօտենալով ֆայտաօնին յայտնում են իրանց իրաւունքը ֆայտաօնում լծված ձիու վրա։ Այստեղ սկսվում է վիճաբանութիւն՝ մինը ասում է որ նա ձին փոխով է առել, միւսը թէ չէ գողացել ես.... Այդ վիճաբանութիւնը շարունակվելով չէրկէզները քաշում են հային իր ֆայտաօնի հետ միասին դէպի պօլիցիա։ Այդ ժամանակ փողոցում պատահած տեղացի հայերը իմանալով գործի էութիւնը, հայի կողմն են բռնում, ընկնում են չէրկէզների վրա և սկսում են նրանց ծեծել։ Կռիւը ընդհանուր է դառնում, չէրկէզները մերկացնում են իրանց սրերը և ընկնում են հայերի վրա, իսկ մէկը հայերի խմբի վրա պատրաստվում է իր հրացանը դարդակել։ Այդ ժամանակ մի քանի քարեր մէկ մէկու ետևից նրա գլխին դիպչելով չէրկէզը հրացանը ձեռքից վեր է գցում։ Հայերը պաշտպանվում են քարերով և փայտերով։ Վերջապէս մի քանի հրացանաւոր սոլդատներ վազ տալով եկան ցրվեցին ժողովուրդը, իսկ կուռողների երկու կողմի մարդկերանցն էլ պօլիցիա տարան։»

—

ԹԻՖԼԻՍԻ Քաղաքային վարչութիւնը հրատարակեց նորերումս մի զեկուցում հասանների վրա «Докладъ Тифл. Городск. Управы объ Асасахъ.» Այդ դիտերապահների վերաբերութեամբ զեկուցումի մասին մի այլ անգամ կը խօսենք։

—

ԹԻՖԼԻՍԻ Մասնաժողովը յօգուտ Թիւրքիայից դէպի Անդրկովկաս գաղթականների խնդրում է մեզ յայտնել որ յօգուտ կարօտեալ գաղթականների ընդունվում են ամեն տեսակ հին և նոր շորեր։ Պահեստը գտնվում է Արծրունու քարվանսարայի մէջ։ Նուիրատուները թող բարեհաճեն բերել կամ ուղարկել իրանց այդ նուէրները նախկին Իվանովի, այժմ Յովհաննիսեանի ընթերցարանը (Դվօրցովի փողոց, Արծրունու տանը), որտեղ և կը ստանան տպված ստացականներ իրանց ընծայաբերութեան համար։

—

ԹԻՖԼԻՍԻ Մասնաժողովը յօգուտ գաղթականների խնդրում է մեզ յայտնել որ, դրամական նուիրատուութիւնները յօգուտ գաղթականների ընդունվում են «Մշակ» և «Тифл. Вѣстн.» լրագիրների խմբագրութիւնների մէջ և «Փարձ» հանդիսի խմբագրատան մէջ։ Նոյնպէս ընդունվում են դրամական նուիրատուութիւնները և պ. Զիլթախովի կանտօրայում, Շադինովի քարվանսարայում, (Բազազխանի եան)։

—

Այս օրերս հասան ԹԻՖԼԻՍ Թիւրքիայի Տրապիզոն քաղաքից աքսորված հայ և յոյն մօտ 150 ընտանիքներ։ Այդ ընտանիքները ռուս հպատակներ լինելով Թիւրքաց տէրութիւնը հրամայեց նրանց յանկարծակի նստացնել շոգենաւի մէջ և բերել տուեց մինչև Փօթի։ Շատերը այդ ողորմելիներից ժամանակ չունեցան մինչև անգամ ամենահարկաւոր բաները վերցնել, այլ ինչպէս կային, վրայի շորերով, Թիւրք ոստիկանութեան ձեռքով բռնի կերպով գցվեցան շոգենաւը և ուղարկվեցան Ռուսաստան։ Այդ տեսակ բարբարոս վարմունքի պատճառը Թիւրքաց կառավարութեան կողմից յայտնի չէ մեզ, բայց ասում են որ Թիւրքաց տէրութիւնը պատճառ բռնելով որ այդ մարդիկ ռուս հպատակներ են, համարեց նրանց ռուս լրտեսներ և աքսորեց իր երկրի սահմաններից։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱՌԱՋ ԵԻ ԱՑԺՄ

—

Ոչ թէ միայն ամենահին ժամանակներում, բայց և միջին դարերում, և մինչև անգամ անցեալ XVIII-որդ դարում և մեր դարի առաջին կէսում մարդկային քաղաքակրթութիւնը հասած չը լինելով զարգացման այն աստիճանի, որին հասել է այժմ, Եւրօպայի ազգերը չունէին իրանց մէջ այն համերաշխութիւնը, այն կապը, որ ունեն մեր ժամանակ։ Երկու որ և է ազգերի մէջ ամիսներով և մինչև անգամ տարիներով շարունակվող պատերազմը ոչինչ վնաս չէր հասցնում հարևան ազգերին։ Այժմ լուսաւորված աշխարհի բոլոր պետութիւնները կարծես կազմում են մի ընդհանուր ընտանիք, ամենքը միմեանց հետ կապված են սերտ հասարակական և տնտեսական կապերով։ Մէկի օգուտը, մէկի շահերը,—միւսների օգուտն ու շահ են կազմում։ Մէկի ցաւը միւսների համար էլ ցաւ է։ Եւրօպան նման է այժմ մի ամբողջ օրգանական մարմնին, որի մի անդամ, մի օրգան վիրաւորվելուն պէս, ամբողջ մարմինը ցաւ կը զգայ։ Այդ է պատճառը որ պատերազմները այժմեան դարում երկար շարունակվել չեն կարող Եւրօպայում։ Պրուսիայի և Աւստրիայի մէջ պատերազմը 1866 թուին, որքան և կարճատև էր, տնտեսական վնաս բերեց հարևան եւրօպական երկիրներին։ Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ պատերազմը զգալի եղաւ նիւթական շահերի վնասվելու կողմից ամբողջ Եւրօպային։ Ռուսաստանի և Թիւրքիայի մէջ այժմեան պատերազմը խափանելով Դունայ գետը, որպէս Եւրօպայի առևտրական ճանապարհ, արդէն զգալի ներգործութիւն ունեցաւ ամբողջ Եւրօպայի տնտեսական, առևտրական, արդիւնագործական կեանքի վրա։ Սև և Միջերկրական ծովերը և Դունայ գետը փոխանակ առևտրական ճանապարհ լինելու, դարձան պատերազմական ճանապարհներ։ Աւստրիայի, Գերմանիայի և Ֆրանսիայի շատ տեղերում ֆաբրիկաներ փակվեցան, մշակ դասը մնում է առանց աշխատանքի, ամեն արդիւնքների գինը բարձրացաւ, առուտուր չը կայ, գործերը կանգ են առել։ Այն կարճ նկատողութիւնը, որ ուղարկված է մեզ Բերլինից, և որ մենք տպում ենք ներկայ համարի Խառն լուրերում, շատ յատկանիշ է.... Այո, լուսաւորված աշխարհի բոլոր մասերը այժմեան ժամանակին այնքան սերտ կերպով կապված են միմեանց մէջ, որ մէկի վնասը միւսի համար էլ պէտք է վնաս համարվի։

Այդ տնտեսական համերաշխութիւնը բոլոր քաղաքակրթված ազգերի միմեանց մէջ՝ մեր լուսաւորված դարի, մեր ժամանակի նշան է։

Այդ է պատճառը, ասում ենք, որ պատերազմները մեր ժամանակին երկար տևել չեն կարող....

Գուցէ կը դայ ժամանակ, որ լուսաւորված ազգերը կը վճռեն իրանց մէջ ունեցած բոլոր տարակուսութիւնները և անբաւականութիւնները ոչ թէ սրով և արիւնով, այլ խաղաղ դատաստանով, միջնորդական միջազգային դատարանով։

Բայց մինչև որ Եւրօպայի ընտանիքում կը գտնվեն Թիւրքիայի պէս վայրենի պետութիւններ, հազիւ թէ պատերազմները Եւրօպայում այդքան շուտ վերջ կառնեն....

ԹԻԹՐՔԻՍ

—

Լրագիրները պատմում են որ հոկտեմբերի 5-ին (17-ին) անգլիական դեսպանը ներկայացրեց սուլթանին անգլիացի Հօրնբի ադմիրալին և անգլիական պարլամենտի երկու

անդամներին։ Սուլթանը շատ լաւ ընդունեց իր հիւրերին, տեղից վեր կացաւ, մեկնեց ձեռքը անգլիացիներին, և խնդրեց նրանց նստել։ Սկսվեցաւ մի կենդանի խօսակցութիւն։ Թարգմանը Սայիդ-փաշա էր, սուլթանի հանդիսապետ, որ շատ լաւ խօսում է անգլիերէն լեզուով։ Սուլթանը յայտնեց իր անկեղծ ցանկութիւնը իրագործել իր հայրենիքի մէջ մտադրած վերանորոգութիւնները։ Նա ցաւելով աւելացրեց, որ ստիպված է պատերազմել ամբոխի մէջ արմատացած նախապաշարմունքների հետ և որ ուրիշ կերպ վարվել չէ կարելի Թիւրքիայում, եթէ ոչ դանդաղ առաջ գնալով և ցանկացած վերանորոգութիւնները հետզհետէ մտցնելով, բայց սուլթանը կրկնեց որ իր մտադրութիւնը իրագործելու համար չի կանգնի ոչինչ արգելքների առջև։ Սուլթանը կարծում է որ իրան կաջողվի փոք առ փոքր ընտելացնել Թիւրքաց ժողովուրդը պարլամենտական սիստեմային և սահմանադրական կառավարչական ձևին։ Սուլթանը շատ ուրախացաւ լսելով իր հիւրերից մինի նկատողութիւնը որ Կ. Պոլիս քաղաքը շատ է փոխվել դէպի լաւը Ղրիմի պատերազմից յետոյ։ Անգլիացի հիւրերը գովեցին նոր հրատարակված կրօնի ազատութեան մասին օրէնքը և նոյնպէս այն օրէնքը որ թոյլ է տալիս ամեն դաւանութեան և ցեղին պատկանող անձերին կալուածներ առնել Թիւրքիայում։ Սուլթանը պատասխանեց որ Թիւրքիան դեռ կարօտ է ընդհանուր արդար օրէնսդրութեան։ Աբդուլ-Համիդ սուլթանը խնդրեց անգլիացի այցելուներին, որ իրանց երկիրը վերադառնալուց յետոյ, ճշդութեամբ պատմեն այնտեղ ինչ որ տեսան և լսեցին, որովհետև մինչև այժմ, նրա կարծիքով, Անգլիայում կային մարդիկ, որոնք զզվարտեցին Թիւրքերին և Թիւրքաց տէրութիւնը։ Սուլթանին զարմացրեց այն փաստը որ իրան ներկայացած երկու անդամները անգլիական պարլամենտի միմեանց հակառակ և թշնամի կուսակցութիւններին պատկանելով, այնու ամենայնիւ բարեկամ էին երևում միմեանց մէջ, միասին ճանապարհորդում էին և միասին տեղեկութիւններ էին հաւաքում։ Անգլիացի այցելուները դուրս եկան սուլթանի պալատից, իրանց հետ այն համոզմունքը դուրս բերելով որ Աբդուլ-Համիդ վստահ, անկեղծ մարդ է, և որ նա բոլոր իր ջանքերը պէտք է գործ դնէ իր մտադրած զաղափարները իրագործելու համար։—«Հավասի» հեռագրական ընկերութիւնը հաղորդում է Կ. Պոլսից հոկտեմբերի 25-ից (նոյեմբերի 6-ից) որ Թիւրքիայի մայրաքաղաքում խռովութիւններ կան։ Շատ մարդիկ կալանաւորվեցան։ Կարծում են որ գտած են մի դաւադրութիւն, որ նպատակ ունէր ներկայ սուլթանին գահից զրկել և հրատարակել սուլթան Մուրադ V-ին։—Բէլգրադից հեռագրում են որ սերբիական մամուլը սաստիկ պատերազմական ոգի է ցոյց տալիս։ Առհասարակ վերջին ժամանակները Սերբիայում նկատելի է պատերազմական տրամադրութիւնը։

ՖՐԱՆՍԻԱ

—

Ֆրանսիական պատգամաւորների ժողովի համար կատարված ընտրութիւնների վերջանալով դեռ չէ վերջացել մի ապատականների և հանրապետականների մէջ ներքին պատերազմը։ Այդ խաղաղ պատերազմը, որ վճռվում է ոչ թէ սրով, հրացաններով և թնդանօթներով, այլ քուէարկութեամբ, շարունակվում է Ֆրանսիայի գաւառական խորհուրդների համար պատգամաւորների ընտրութեամբ։ Վերջին հեռագիրներին նայելով այդ ընտրութիւնները գրեթէ վերջացած են, միայն 80 դէպարտամենտներում պէտք է կատարվեն լրացուցիչ ընտրութիւնները։ Արդէն յայտնի է որ գաւառական խորհուրդների համար ընտրված 1357 պատգամաւորներից 764 պատգամաւորներ պատկանում են հանրապետական կուսակցութեանը և միայն 511 հոգի միապետականներին։ Այն 80 ընտրողական վիճակներում, որտեղ պէտք է կատարվեն լրացուցիչ ընտրութիւնները կարծում են որ 40 վիճակներում կընտրվեն հանրապետականները։ Ներկայ ընտրութիւններով հանրապետականները ձեռք են բերում Ֆրանսիական գաւառական խորհուրդներում 107 տեղ աւելի, քան թէ առաջ ունէին։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բերլինից հեռագրում են հոկտեմբերի 16-ից (28) որ գերմանական մայրաքաղաքի ռուսաց դեսպանատան եկեղեցու մէջ կատարվեցաւ հոգեհանգիստ պատերազմի դաշտի վրա սպանված Նորին Բարձրութեան Լէյխտեմբերգսկից Իշխանի յիշատակին։ Եկեղեցում ներկայ էին գերմանական կայսրը և թագաժառանգը, իշխան Ֆրիդրիխ-Կարլ, մինիստր ֆոն-Բիւլով և ուրիշ գերմանական բարձրաստիճան անձինք։

—Բերլինից հեռագրում են որ ծերունի ֆէլդմարշալ Վրանգէլ սաստիկ հիւանդութենից յետոյ այս օրերս վախճանվեցաւ։

—Փարիզից հեռագրում են հոկտեմբերի 24-ից (նոյեմբերի 5-ից) որ նախընթաց օրվայ ընդհանուր խորհրդների ընտրութիւնների ժամանակ հանրապետական կուսակցութիւնը յաղթող հանդիսացաւ 60 նոր ընտրողական վիճակներում։

—«Հավասի» հեռագրական ընկերութիւնը հաղորդում է որ հերցոգ Բրոլի, մինիստրների խորհրդի նախագահ, որ ներկայացաւ որպէս միապետական կանդիդատ Էրի դեպարտամենտի գաւառական խորհրդի, չընտրվեցաւ։

—Կ. Պոլսից հեռագրում են 24-ից, որ Մեհմեդ-Ալի-փաշա նշանակված է Սոֆիայի և Օրխանիէի թիւրքաց զօրքերի հրամանատար։

—Փարիզից հեռագրում են հոկտեմբերի 25-ից որ գործնական մինիստրութեան կազմակերպելը Պուիէ-կէրտիէի նախագահութեամբ, չաջողվեցաւ։ Կարծում են որ հերցոգ Բրոլի կը մնայ մինիստրների խորհրդի նախագահ և յանձն կառնէ պաշտպանել տէրութեան քաղաքականութիւնը ազգային-ժողովի, այսինքն թէ սենատի և թէ պատգամաւորների առջև։

—Պարսկաստանից հաղորդում են լրագիրներին որ այդ երկիրը կապեց փոստային դաշնադրութիւն Ռուսաստանի, Գերմանիայի և Աւստրիայի հետ։

—Թէհրանից հաղորդում են լրագիրներին որ Պարսկաստանի Ռաշտ քաղաքում նորից երևեցաւ ժանտախտ, որ այդ քաղաքում օրը 10 մարդուց աւելի զոհեր է անում։ Այս մահկանացութեան բաւական մեծ պրօցէնտ է, եթէ աչքի առջև ունենանք այն, որ Ռաշտից շատերը փախել էին քանի մի ամիս սրանից առաջ, երբ ժանտախտը սաստիկ տարածված էր այդ քաղաքում և օրը մինչև 35 հոգի էին մեռնում այդ քաղաքում։ Այժմ ժանտախտը սպառնում է և Թէհրան քաղաքին։ Լրագիրները ասում են որ պարսից տէրութիւնը շատ անհոգ է այդ սարսափելի ցաւի առաջն առնելու որ և է միջոցներ գործ դնելու վերաբերութեամբ։

—Վիէննայից հեռագրում են Ս. Պետերբուրգի լրագիրներին որ ինչպէս լսվում է Կ. Պոլսի մէջ կազմվել է մի զօրեղ կուսակցութիւն, որ պահանջում է խաղաղութիւն կապել Ռուսաստանի հետ։ Մեհմեդ-Ռիշտի առաջնորդ է այդ կուսակցութեան։ Սուլթանին հաւատացնում են որ քանի կարելի է շուտ խնդրէ Ռուսաստանից խաղաղութիւնը, եթէ ոչ Թիւրքիան աւելի էլ ջարդվելով՝ Սուլթանին կարող է սպառնալ գահի կորցնելը։ Սուլթանին համոզում են սկսել խաղաղական բանակցութիւնները անմիջապէս Ռուսաստանի հետ և ոչ թէ եւրոպական տէրութիւնների միջնորդութեամբ։

—«Temps» լրագիրը կարծում է որ Մակ-Մահոն մարշալը այժմ համոզվեցաւ թէ հարկաւոր է փոխել այժմեան կառավարութեան բռնած քաղաքականութեան եղանակը։

—Կ. Պոլսից հեռագրում են որ Թիւրքիայի մայրաքաղաքի գարնիզօնը երևի կուղարկվի պատերազմական բեմը, իսկ մայրաքաղաքում կը մնայ քաղաքացիներից կազմված պահապան զօրքը։

—Կ. Պոլսից հեռագրում են որ վերջին ժամանակները տէրութիւնը էլ ոչինչ պաշտօնական հեռագիրներ չէ հրատարակում պատերազմի ընթացքի մասին։

—«Temps» ֆրանսիական լրագիրը հաղորդում է որ մարշալ Մակ-Մահոն յայտնեց իր պատրաստութիւնը ներել տպագրական օրէնքի դէմ յայտնված գործած դատապարտվածներին։

—«Polit. Corresp.» լրագրին հաղորդում են, որ Կ. Պոլսի մէջ տրամադրութիւնը շատ յուսահատական է։ Քաղաքական շրջաններում կարծում են որ Պլէվնա երկար չի դիմանայ ռուսաց զօրքերին։

—Գերմանական լրագիրներում կարդում ենք որ Թիւրքաց զօրքի չերկէզները խախտեցին Սերբիայի սահմանների անբռնաբարութիւնը, այդ պատճառով սերբական կառավարութիւնը հրամայել է իր զօրքերի մի մասին ուղևորվել չատպով դէպի Զայչար, Տիմոկի վրա։

—Ֆրանսիական «Moniteur Universel» լրագիրը կարծում է որ Ֆրանսիական տէրութիւնը աւելի և աւելի հակվում է դէպի հաշտութիւնը հանրապետական կուսակցութեան հետ։ Այս օրերս Գրէվի հասաւ փարիզ և բացարձակ յայտնեց իր համոզմունքը որ հաշտութիւնը հնարաւոր է։

—Կրկին լուրեր են տարածվում որ Միդհադ-փաշան կանչվելու է Կ. Պոլիս, մեծ-վիզիրի պաշտօնը յանձն առնելու համար։ Բայց որովհետև այդ լուրերը շատ անգամ տարածվում էին և անստոյգ էին յայտնվում, հաղիւ թէ և այժմ կարելի է նրանց որ և է հաւատ ընծայել։ Միդհադ-փաշան գտնվում է այժմ Իտալիայի Նապոլի քաղաքում։

—Անգլիական «Daily Telegraph» լրագրի թղթակիցը հեռագրում է իր լրագրին, որ Հասան-Բալէի մօտ ռուսների և թիւրքերի մէջ այս օրերս (հոկտեմբերի 20-ին) պատահած կռուի ժամանակ թիւրք գերիների թուում ռուսների ձեռքը ընկաւ և «Daily Telegraph» լրագրի թղթակիցը։ Մուսա-փաշա կօնդուխով որ առաջ ռուսաց ծառայութեան մէջ էր և այժմ կռւում է ռուսների դէմ, փախչելով հաղիւ հազ աղատվեցաւ գերութենից։ Գեներալ Գէյման շատ մարդասէր կերպով վարվեց գերի ընկած անգլիացի թղթակցի հետ և խոյսն աղատութիւն չնորհեց նրան։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ գրում են Կ. Պոլսից հոկտեմբերի 5-ից հետևեալը «Թէև պատերազմն կը շարունակուի, բայց մի մեծ բան եղած չը կայ։ կերևի թէ այժմ երկու կողմն ալ ձմեռի հոգսերով զբաղուած են։ Այստեղ առևտուրի նուազութիւն և դրամի նեղութիւն կը տիրէ սարսափելի կերպով։ Ազգային գործերն և վարժարաններն ալ շատ խեղճ վիճակի մէջ ընկած են։ Արդէն գիտէք որ մի քանի վարժարաններ փակուեցան վերջին ժամանակներ, փողի համար նեղութիւն կրելով։ այժմ Արմաշի վանքի վարժարանն ալ փակուեցաւ։ Օրթա գիւղի արական սեռի վարժարանն ալ փակ է։ Նոյն գիւղի մէջ պ. Գուրգէնի բացած Հայկական գիշերօթիկ վարժարանն կը շարունակուի մեծ նեղութիւններ կրելով։ պ. Պէրպէրեանն ալ Գատը գիւղի մէջ բացած վարժարանն կը շարունակէ, բայց վնասով։ Իսկ խեղճ Խրիմեան Հայրիկ՝ հայրենիքի անձնուէր այդ կենդանի նահատակ՝ բանաստեղծութիւններ գրելով և տպել տալով և Հայաստանի վրա լալով ողբալով ժամանակ կանցնէ։ Գալով պարիարք Ներսէս Սրբազանին, սա ալ ազգի վերքերն իւր փառասիրութիւնով և ունայնասիրութիւնով կուզէ դարմանել, որով թէ կը մխիթարուի և թէ կը փառաւորուի և ազգասէր ածականն ալ քաղաքագէտ ածականին հետ կընդունի իւր վրա։ Վայ քեզ խեղճ հայ ազգ....»

* * *

Դօկաօր Անդրէաս Արծրունի գրում է մեզ ԲԷՐԼԻՆԻՑ հոկտեմբերի 16-ից։ «Այս գրգռված ժամանակներում նամակագրութիւն գոնէ պէտք է քաղաքական բովանդակութեան լինի, բայց այստեղ բացի մինիստրութեան մէջ լինելու փոփոխութիւններից ուրիշ ոչինչ հետաքրքրական բան չը կայ քաղաքական աշխարհում։ Իսկ հանդիսաւոր հանդարտ նկարագրութիւններ անել այստեղի կեանքի մասին (թէև գուցէ շատ նիւթ էլ գտնվէր), մեր ընթերցողների համար երևի հետաքրքրելի չի լինի այժմ։ Իսկապէս այս բոպէիս այստեղ միայն խօսում են դրացի տէրութիւնների մասին՝ Ռուսաստանի պատերազմը և Ֆրանսիայի կուսակցական կոնֆլիկտը ամենքին զբաղեցնում են։ Նոյնպէս շատ են խօսում պապի առողջութեան, կամ լաւ է ասել, հիւանդութեան մասին։ Հասկանալի է որ այս երեք հարցերն էլ մեծ նշանակութիւն ունեն Գերմանիայի ներքին կեանքի համար։ Դոցանից մասամբ կախված է երկրի քաղաքական և ֆինանսական հանգստութիւնը և բարօրութիւնը։ Զարմանալի չէ որ այժմ ամեն կողմից այստեղ զանգատներ են լսվում որ գործերը վատ են գնում։ Թէ մշակները, թէ գործարանատէրերը, թէ վաճառականները և թէ մինչև անգամ ուտելիք ծախողները զանգատվում են որ գործ չունեն, ոչինչ չեն վաստակում, ոչինչ չեն ծախում։ Ամեն բան կանգ է առել, ասես թէ մի բան պատրաստվում է, մի բանի է ամեն մարդ սպասում։»

* * *

Նորերումս հրատարակվեցաւ Լայպցիգի մէջ մի գերմաներէն գիրք Թիւրքիայի վրա հետևեալ վերնագրով «Stambul und das Moderne Türkenthum» von einem Osmanen. Leipzig. Duncker und Humbolt 1877. (Ստամբուլ և արդեան թուրքութիւնը, հեղ. մի Օսմանցու)։ Այդ գրքի գրողը երևում է ինքն թէև թիւրք հպատակ, բայց ցեղով եւրօպացի, և երևի աւստրիացի, իր գրքի գերմաներէն ոճին նայելով։ Գիրքը, որի բովանդակութեան և գլխաւոր մտքերի վրա յոյս ունենք մի այլ անգամ աւելի մանրամասն խօսելու, մի բոլորովին նոր լոյս է գցում թիւրք հասարակութեան թշուառ դրութեան, թիւրքերի բնաւորութեան և առհասարակ թիւրքաց տարրի խորին անբարոյական զարգացման վրա։ Հեղինակը ատում է ռուսներին, բայց թիւրքերի վրա էլ խօսում է այնքան ատելութեամբ և արհամարհանքով, որ այդ հանգամանքը արդէն ցոյց է տալիս թէ մարդը ինչքան ռուսատեաց էլ լինէր, այնու ամենայնիւ անկեղծ է իր զգացմունքի մէջ և չատերի պէս իր համոզմունքի դէմ չէ պաշտպանում թիւրքաց ողորմելի տարրը, միմիայն դէպի Ռուսաստանը ունեցած ատելութեան զգացմունքի պատճառով։

* * *

Ստացանք յօգուտ գաղթած հայերի 50 ռուբլ ԱԹԱԼԲԱԼԱԲԻՑ պ. Սարգիս Ցարութիւնեանի ձեռքով։ Բայց այդ գումարի նուիրատուների անունները մեզ չը յանձնվեցան, որպէս զի տպենք մեր լրագրում։

* * *

Պ. Յ. Խատիսով որ վերադարձաւ Երևանի նահանգից, որտեղ նա ուղարկված էր կառավարութեան կողմից գաղթականների դրութիւնը ուսումնասիրելու և թշուառներին թիֆլիսի Մասնաժողովի կողմից հարկաւոր նիւթական օգնութիւն հասցնելու համար, ներկայացրեց Մասնաժողովին մի մանրամասն և ընդարձակ զեկուցում գաղթականների դրութեան վրա։ Այդ զեկուցումը, ինչպէս լսել ենք, շուտով տպագրվելու է։

* * *

«Кавказъ» լրագրին գրում են ԵՐԵՒԱՆԻՑ, որ թիւրքերի ինքնասիրութիւնը չափ ու սահման չունէր, քանի որ Իզմայիլ-փաշայի զօրքերը մեր սահմանների վրա էին կանգնած։ Իսկ այժմ երբ հեռացաւ այդ զօրքը, Բայազէտի թիւրքաց գաւառապետը (գայմագամ) դիմեց Նորերումս Սուրմալուի գաւառի ռուս գաւառապետին, նրանից օգնութիւն խնդրելով թիւրքիահպատակ Ալի-Աղայի վայրենի քուրդերի խմբի դէմ։ Ահա մի լաւ օրինակ թիւրքաց իշխանութեան անընդունակութեան և թուլութեան....

* * *

«Вѣстн. Народн. помощи» ռուս պարբերական հրատարակութիւնը հաղորդում է որ մինչև հոկտեմբերի 13-ը ներկայ պատերազմի մէջ ռուս զօրքի կորուստները թէ սպանվածներով և թէ վիրաւորվածներով պատերազմական երկու բեմի վրա հասնում են 61,942 թվին։ Այդ թվի մէջ չեն հաշված վերջին ճակատամարտերի Ալաջա-դաղի և Գօրնի-Դուբնիակի կորուստները։

* * *

«Голосъ» լրագրին հեռագրում են ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԻՑ որ այս տարվայ խաղողի քաղը շատ առատ է, թէև խաղողի յատկութիւնը շատ լաւը չէ՝ նա այս տարի ջրալի է։ Բայց այնու ամենայնիւ առնելու ցանկացողները բազմաթիւ են և խաղողը լաւ է ծախվում։

* * *

Ցայտնի է որ պատերազմական ժամանակին միշտ աւելի հիւանդութիւններ են լինում, քան թէ խաղաղութեան ժամանակ։ Օդը միշտ վա-

բակված է լինում զանազան վնասակար գոլորշիներով, որոնք իրանց ծնունդ են առնում թէ պատերազմական դաշտերում, որտեղ փտում են մարդիկների և կենդանիների անհամար մարմիններ, և թէ նոյնպէս ժամանակաւոր-զինուորական հիւանդանոցներից, որոնք պարունակում են իրանց մէջ բազմաթիւ հիւանդներ և վիրաւորվածներ։ Այդ պատճառով օդի, ջրի, բնակարանների և փողոցների մաքրութիւնը որ միշտ նշանաւոր առողջապահական պայմաններից մինն է, պատերազմական ժամանակին աւելի էլ պէտք է գրաւէ մեր ուշադրութիւնը։ Ուստի մենք չենք կարող մեր քաղաքի թէ քաղաքային վարչութեան և թէ պոլիցիայի ուշադրութիւնը չը դարձնել Թիֆլիսի փողոցների և գաւիթների սաստիկ անմաքրութեան վրա։

***

Ռուս «Сѣверный Вѣстникъ» լրագրի պատերազմական թղթակից պ. Գ ո լ ո վ ա չ ե վ, որի հետ մենք առիթ ունեցանք քանի մի ժամանակ առաջ ծանօթանալ Թիֆլիսում, ինչպես հաղորդում են լրագիրները, այս օրերս վախճանվեցաւ Ս. Պետերբուրգի մէջ։ Նա արդէն բաւական ծեր մարդ էր։

***

Մեր ծանօթներից մինը որ եկաւ այս օրերս ՁԱՔԱԹԱԼԻՑ, պատմում էր մեզ, որ քաղաքը, ինչպէս յայտնի է, քանի մի ժամանակ առաջ շրջապատված լինելով ապստամբ լեզգիներով, բոլոր արական բնակիչները, որոնք կարող էին զէնք կրել, ստացան հրացաններ։ Քաղաքի բնակիչների մեծ մասը հայեր են, և նրանք էին կազմում պահապան զօրքերը և եթէ լեզգիները յարձակվէին քաղաքի վրա պէտք է բերդը պաշպանէին։ Ափսոս միայն որ քաղաքում չը գտնվեցան նոր սիստեմայի հրացաններ, այլ բաժանած զէնքերը հին ձևի, չախմախաւոր հրացաններ էին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀՈՎԱՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵՆԻՑ ՅԱՅՏՆՎՈՒՄ Է

1. Որովհետև անցեալ մայիս ամսին ընկերութեան հիմնադիր անդամներ գրված 173 անձինքներից միայն 52 անձինք մոցրին ընթացող տարվայ համար իրանց անդամական վճարը, մնացածները և նոյնպէս նոր անդամ գրվող ցանկացողները հրաւիրվում են շուտով մոցնել տարեկան վճարը Ընկերութեան գանձապահ պ. Ա. Գ. ՍԵՐԳԷԵՎԻՆ (Թիֆլիսի Փոխադարձ Կրեդիտի ընկերութիւն վարչութեան մէջ), որից յետոյ անձինք կը սաանան իրանց անդամական տոմսակը և մի մի օրինակ ընկերութեան կանոնադրութեան։

2. Հերթական նստերը ընկերութեան, սկսած նոյեմբեր ամսից ներկայ թվի, նշանակվում են՝ ընկերութեան վարչութեան համար ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՄՍԻ 5-ին, իսկ ընկերութեան անդամների ընդհանուր ժողովների համար իւրաքանչիւր ամսի 20-ին։ Ուրեմն բոլոր անձինք, որոնք ունեն որ և է գործ ընկերութեան մէջ, թող բարեհաճեն հաւաքվել նշանակված օրերին Սերգիեվսկի փողոցի վրա գտնվող Չիթախովի տանը при Канцеляріи Управленія Кавк. Конно-заводск. Округа, Сергіевск. ул. д. Читахова.

2—3

Մասնագէտ արուեստական ատամներ չինելու և ոսկով պլոմբելու։
Ընդունում է 10 ժամից մինչև 4 ժամ։ Կարելի է խօսել ամեն լեզուներով։

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
ԴՈԿՏՕՐ Լ. ԲԷՐՆԱՐԴՈ-ԲԷՐԿՄԷՐ
Պատուաւոր անդամ Լօնդոնեան ատամնաբուժական հիւանդանոցների

Մոսկվայում на углу Кузнецкаго моста и Петровки, домъ Шориной, входъ съ Петровки. противъ гостин. Франція.

18—25 (1)

Ein Lehrer der DEUTSCHEN Sprache wünscht Stunden zu ertheilen. — Sprechstunde von 3—4 Uhr Nachmittags.— Саперная улица. № 48.

ԳԵՐՄԱՆԵՐԷՆ լեզուի մի ուսուցիչ կամենում է այդ լեզուից դասեր տալ։ Խօսել պայմանների վրա կարելի է 3—4 ժամ կէսօրից յետոյ, Սապէրնի փողոց № 48. Թիֆլիսում։

3—3

Մամուլի տակից դուրս եկաւ Գ. ԱԲՈՎԵԱՆՑԻ Հայոց պատմութիւնը, երկրորդ տպագրութիւն, ընտիր թղթի վրա և մաքուր տպած։ Ցանկացողք ձեռք բերել կարող են դիմել հրատարակիչ պ. պ. եղբարց Զ. և Բ. Աբովեանցներին, սոցա խանութը Միխայէլովսկի կամուրջի վրա։ Գինը հատով առնողների համար 60 կոպ., իսկ 20-ից աւելի գնողներին 50 կոպէկ։ 2—3

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ Հայոց կենդանի լեզուի ԴԱՍԵՐ և ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ։ Հարցնել «ՄՇԱԿ» լրագրի խմբագրատանը։ 1—10

ԲԱՐՈՒՏՉԵՎԻ ԿԱՆՏՈՐԱ

ԹԻՖԼԻՍՈՒՄ Աստամանկի փողոցում, Կվեստկովսկու տուն, Մուզէումի հանդէպ։

1 ԱՌՆՈՒՄ Է և ԾԱԽՈՒՄ Է 5% բանկային տանող (վեքսելների) տոմսակները։

2. ԾԱԽՈՒՄ Է 5% տանող տոմսակները պայմանաժամի յետաձգութեամբ 12 մինչև 24 ամսով և աւելի, 20 բուբլի բէհով։

3. ԸՆԴՈՒՆՈՒՄ Է դրամական գնումներ՝ տարեկան և կէս տարեկան պայմանաժամերով և մինչև պահանջ (պրոցէնտները կանտորայի հետ համաձայնութեամբ)։

4. ՓՈԽ Է ՏԱԼԻՍ գումարներ տակոսաբեր թղթերի գրաւականով 6 և 10% բօրսային կուրսից պակաս. տանող տոմսակների վրա փոխ է տրվում գումարը մինչև 180 բուբլ և վերցվում է 12% տարեկան ծախսերով։ Վճարքը թոյլ է տրվում մաս մաս։

5. ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ուրիշ բանկերից տոմսակների կրկին գրաւ դնելը, վճարում է մնացած փողերը և առնում է տոմսակներ ուրիշ բանկերի մէջ գրաւ դրած պարտաւորութիւններով։

6. ԱՊԱՀՈՎԱՑՆՈՒՄ Է տանող տոմսակներ հանդիսման տիրաժից։

7. Տակոսաբեր թղթերի գրաւականով ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ, սեփական գարանտիայով, կրկնապատկելով սեփականատէրերի եկամուտը։

8. ԸՆԴՈՒՆՈՒՄ Է պահելու համար բոլոր տակոսաբեր թղթերը մինչև պահանջ։

Բոլոր տեղեկութիւնները այն ամենի վրա, որ վերաբերվում է բանկային օպերացիաների, թղթերի գնի, տարած գումարների և տիրաժների մասին, կարելի է անվարձ ստանալ կանտորայում։

17—21 (1)

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31. ՏԵՂԵԿԱՑՈՅՑ ԹԻՖԼԻՍ. 1877

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Հոկտեմբերի 31-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պոլումպերիալը)	8	37
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1500	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1240	—
Վիքրիչնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	220	—
Երկրորդ 5% վիքրիչնի »	215	—
Պարսկական կուրսը 254—75 ֆ.	100	—
Լօնդոնի կուրսը Օդեսայի վրա.	—	—
Վենայի կուրսը ածէ 121 գ.	9	88
Դաւրեժի բարաթը.	100	—
Առևտրական բանկի ակցիան 200 մ.	5	70
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	265	—
Շաքարը բրօցկու	125	—
» միւս տեսակը	8	90
» չաքարաւազը	8	70
» տրանզիտը	8	20
» մաքսը վճարած	8	80
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից	13	—
Միւս տեսակը հին սերմից	9	40
Բուրդը թուշի	8	50
» թարաքամի	7	50
Ալիւր Շորագալու	3	50
» Երևանի	2	—
Գարին	—	—
Մոմը բնաճարպի (стеар.)	1	35
Մետաքս Նուխվայ	14	80
Կախեթունը	154	—
Կոկոնը Նուխվայ (рож.)	100	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	34	—
Կոֆէն մօկօի	55	—
» լիվանի	28	—
» մարտինկոյինը	—	—
	26	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները	1	
Ռուսաստան	2	
Աւստրիա	3	
Անգլիա	4	
Գերմանիա	2	88
Ֆրանսիա	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդականների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 բուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 բուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 բուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 բոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլովօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 բոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից	9. 21	5. 18
Գօրի	11. 58	9. 43
Միխայլովօ.	1. 29	11. 57
Ռիօն	6. 47	
Փօթի	9. 40	
	առաւօտ.	
Փօթիից	9. 13	
Ռիօն	12. 13	
Միխայլովօ.	5. 39	1 37
Գօրի.	7. 5	4 8
Թիֆլիս.	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ	90	68	38
Գորի	3. 20	2. 40	1. 33
Սուրամ	5. 22	3. 92	2. 18
Քութայիս	9.	6. 75	3. 75
Փօթի	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

1) Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ՝ Ռուսաստան և արտասահման ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 12 (բացի կիրակի օրերից)

2) Բագուի ճանապարհը՝ թեթև փոստը ընդունվում է երեքշաբթի և ուրբաթ օրերը, իսկ ծանր փոստը երկուշաբթի։

3) Երևանի տրակտը՝ ամեն օր։

4) Փօթի-Թիֆլիսեան երկաթուղու գիծը՝ ամեն օր, բացի կիրակի օրերից։

5) Նուխու տրակտը՝ թեթև փոստը ընդունվում է չորեքշաբթի, իսկ ծանր փոստը շաբաթ օրերը։

6) Բէլիկլիւչի ճանապարհը՝ ամեն տեսակ փոստ ընդունվում է երկուշաբթի և ուրբաթ օրերը։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բացի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բէլիկլիւչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	կոպ.
Բաց նամակը ածէ.	4
Ռուսաստան նամակը	8
Գերմանիա, Աւստրիա	8
Ֆրանսիա	8
Անգլիա	8
Շվէյցարիա	8
Թուրքիա (կ. Պոլիս	8
Թիւրքիա (ցամաք)	8
Իտալիա	8
Ամերիկա	28
Պարսկաստան	10
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ՓՕՍՏԻ ԿԱՌՔԵՐ

Թիֆլիսից Վլադիկավկաս փոստի կարգերը գընում են ամեն օր, երկու անգամ օրը։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ԳԱՆՁԱԿ. Ղ. Ս. Յովհաննիսեանց։ Փոխանակագրով ուղարկած 25 բուբլ 20 կոպէկ փողը յօգուտ գաղթականների չնորհակալութեամբ ստացանք պ. Յ. Բիշարից և հասցրինք Մասնաժողովին։

—ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ. Մ. Մ. Ձեր նամակը ստացանք և նրանից քաղուածք արինք։

—ԹԻՖԼԻՍ. Ս. Տ. Մ. Դուք համակրում էք մեր մաքին թէ մեր հարուստ ընտանիքները կարող են իրանց երեխաների համար դաստիարակուհիներ (գուվերնանտ) վերցնել հայուհիներից։ Եթէ համակրում էք և ձեզ հետ այդ մաքին համակրում են մեր հարուստները, շատ հեշտ է այդ իրագործել՝ հարկաւոր է միայն դիմել Մարիամեան և Գայեանեան ուսումնարանների վարչութիւններին և խնդրել որ առաջարկեն ձեզ ուսում աւարտած աշակերտուհիներից ամենաընտիրներին։ Երևի նոքա ուրախութեամբ այդ կանեն։

Дозволено Цензурою 30 Октября 1877 г. Тифлисъ. Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ